

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 18.03.2014թ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Գ.Քալանթարյանը, Ս.Ղամբարյանը, Գ.Շահինյանը, Ա.Հարությունյանը, Ս.Աղաբեկյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Օհանյանը, Վ.Դոխոյանը, Ա.Մատինյանը, Վ.Դավիթավյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Ափինյանը, Կ.Պառավյանը, Դ.Սիմոնյանը, Ա.Փելեշյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ Ս.Հակոբյանը, Խ.Վարդանյանը, Հ.Մովսիսյանը, Ա.Այվազյանը: Ավագանու անդամ Գոռ Բաղյանը նիստին մասնակցում էր արդեն քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և կրթության բաժնի պետի կարգավիճակով:

Նիստին մասնակցում էին նաև ՀՀ Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը, փոխմարզպետ Տ.Բաղյանը, Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության պետ Ս.Հովհաննիսյանը, Ն.Սարգսյանը, Գ.Սիմոնյանը, մարզպետարանի ու քաղաքապետարանի պատասխանատու աշխատակիցներ, համայնքի ազգաբնակչության, հասարակական, պետական ու մասնավոր այլ կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը Ս.Դարբինյանը ավագանու անդամներին տեղեկացրեց, որ ավագանու անդամ Գոռ Բաղյանը նշանակվել է քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և կրթության բաժնի պետ, որն օրենքով անհամատեղելի է ավագանու անդամության հետ: Ուստի, նախընտրելով հաստիքային վերոհիշյալ պաշտոնը, Գ.Բաղյանը գրավոր դիմել է համայնքի ավագանուն վաղաժամկետ դադարեցնել ավագանու անդամի իր լիազորությունները, որի վերաբերյալ որոշման նախագիծը տրամադրված է ավագանուն և առաջարկեց հարցն ընդգրկել նիստի օրակարգ:

Միաձայն կողմ քվեարկությամբ հարցն ընդգրկվեց օրակարգ:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց:

Այնուհետև ներկայացվեց նիստի օրակարգը:

Միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օրակարգ՝

1. Համայնքի ավագանու անդամ Գոռ Կառլենի Բաղյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

զեկ.՝ Ս.Դարբինյան

2. Վանաձորի համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ.՝ Ս.Դարբինյան

3. Սամվել և Արթուր Հակոբյաններին նվիրված հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Տ.Պապանյան

1.ԼՍԵՑԻՆ - Համայնքի ավագանու անդամ Գոռ Կառլենի Բաղյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

զեկ.՝ Ս.Դարբինյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

2.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի 2013 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ.՝ Ս.Դարբինյան

Հարցի քննարկման շուրջը ծավալված մտքերին մասնակցեցին ու զեկուցողին հարցեր տվեցին ավագանու անդամներ Գ.Քալանթարյանը, Ս.Ղամբարյանը, Գ.Շահինյանը, Ա.Օհանյանը, Ա.Մատինյանը, Վ.Դավիթավյանը, Ա.Խաչատրյանը: Տրվեցին սպառիչ պատասխաններ:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 9, դեմ՝ 1 (Ա.Խաչատրյան), ձեռնպահ՝ 5 (Ա.Մատինյան, Ա.Օհանյան, Ա.Գրիգորյան, Գ.Շահինյան, Վ.Դավիթավյան), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

3.ԼՍԵՑԻՆ

- Սամվել և Արթուր Հակոբյաններին նվիրված հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Պապանյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը, որը հանդես եկավ նաև մարզպետարանի և ավագանու համագործակցության առաջարկությամբ: Նիստի ավարտից հետո քաղաքապետ Ս.Դարբինյանը պատասխանեց ավագանու անդամների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների և քաղաքացիների հարցերին:

Նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԳԱՅԱՆԵ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՇԱՀԻՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԱՌԱՎՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՏԻՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ԱՓԻՆՅԱՆ

ՎԱՀԵ ԴՈՒՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Հրահատ Նազարյանը _____